




EFECW

ECUMENICAL FORUM OF EUROPEAN CHRISTIAN WOMEN



10-րդ Ընդհանուր Համաժողով

**2018թ-ի օգոստոսի 7-12, Սոկո Գրադ, Սերբիա
Եզրափակիչ ուղերձ**

<<Եթե դու այս ժամանակ չլսես ու լռես...>> (Եսթեր 4:14)

Եվրոպայի Քրիստոնյա Կանանց Էկումենիկ Ֆորումի ավելի քան 100 անդամ կանայք, իրենց հետ բերելով քրիստոնյա ընտանիքի տարբեր ավանդույթներ, հավաքվել էին 24 երկրներից՝ միավորվելու աղոթքների, հետաքրքրությունների, քննարկումների և ուխտագնացության միջոցով:

Հանդիպումը կայացավ Սերբիայի Սոկո Գրադ քաղաքում գտնվող Սուրբ Նիկոլայ Օրթոդոքս վանքում: Շնորհակալություն ենք հայտնում տեղի կանանց՝ մեզ ողջունելու, ինչպես նաև վանականներին՝ մեզ ջերմորեն հյուրընկալելու համար:

Աղոթքով անդրադառնալով Եսթերի գրքին և առաջնորդվելով «Եթե դու այս ժամանակ չլսես ու լռես...» մեջբերմամբ՝ մենք քննարկեցինք, թե ինչ է նշանակում մեր եկեղեցիներում որպես կին բարձրաձայնել այն խնդիրները, որոնց հետ բախվում ենք մեր համատեքստում:


Մենք կբարձրաձայնենք՝

- Մեր եկեղեցիների ներսում կանանց անտեսանելիության մասին,
- Կանանց՝ սոցիալական, քաղաքական և տնտեսական հարցերում ներգրավվածության կարևորության մասին,
- Կանանց բռնաբարության, չարաշահման, խոշտանգման և բռնության մասին,
- Էկումենիկ և միջկրոնական երկխոսության կարևորության մասին,
- Բոլորի՝ հատկապես ներգաղթյալների և ապաստան հայցողների, մարդու իրավունքները պաշտպանելու մասին,
- Ընդդեմ պոպուլիստական քարոզչության,



EFECW

ECUMENICAL FORUM OF EUROPEAN CHRISTIAN WOMEN



- Խաղաղության հաստատման մեջ կնոջ դերի մասին:

Մենք քույրերով սատարում ենք միմյանց՝ հասնելու համար կանանց ճանաչմանը և իմաստալից մասնակցությանը մեր եկեղեցիների գործերին:

Մենք շարունակելու ենք զարգացնել և աջակցել այն ծրագրերը, որոնք նպաստում են կանանց՝ սոցիալական, քաղաքական և տնտեսական հարցերում ներգրավվածությանը:

2018 թվականը նշում է Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի **Համերաշխություն կանանց** հետ էկումենիկ տասնամյակի ավարտի 20-ամյակը: Ցավում ենք, որ դեռևս կարիք կա անդրադառնալու վերջինիս առաջնահերթություններին և կոչ անելու բոլոր եկեղեցիներին վերանայելու դրանք: Մասնավորապես մենք կոչ ենք անում սատարել Ստամբուլի կոնվենցիայի՝ կառավարության կողմից վավերացմանը, ինչպես նաև <<Սև հինգշաբթի>> և <<Սպիտակ ժապավեն>> ակցիաներին, որոնք պահանջում են վերջ դնել կանանց նկատմամբ բռնությանը:

Դեպի հավասարություն տանող մեր ճանապարհին մենք ընթանում ենք տարբեր քրիստոնեական դավանանքների և տարբեր հավատքների կանանց հետ և տոնում ենք մեր մասնակցությունը իբրև <<Կողք կողքի>> շարժման անդամներ՝ հանուն գենդերային արդարության:

Մենք մարտահրավեր կնետենք գործող եվրոպական և պետական օրենքներին ու քաղաքականություններին, համաձայն որոնք կանանց մղում են գոյատևման անհարկի քայլերի՝ հանգեցնելով մարդկային արժանապատվության կորստի: Մենք համերաշխությամբ աշխատելու ենք այն կանանց հետ, ովքեր գտնվում են թրաֆիկինգով զբաղվող մարդկանց և մաքսանենգների իշխանության ներքո:

Մենք կանանց տրամադրում ենք հարթակ, որպեսզի նրանք կիսվեն իրենց գիտելիքներով, բարձրացնեն իրազեկվածությունը և կանանց առջև այսօր ծառայած խնդիրների վերաբերյալ հիմնավորված կարծիք զարգացնեն:

Մեր եկեղեցիների, համայնքների ներսում և ողջ աշխարհում մենք ձգտում ենք բարձրաձայնել խաղաղության ու հաշտության մասին:

Մենք միասին մասնակցել ենք ուխտագնացության և մի տարածք ենք ստեղծել՝ մեր հոգևորությամբ կիսվելու և այն արտահայտելու համար: Նորոգված մեր հավաքով՝ թող Աստված առաջնորդի մեզ մեր ընթացքին ուրախությամբ ու խաղաղությամբ՝ որպես երկրի վրա Քրիստոսի սիրո նշաններ:

Էլ. հասցե՝ info@efecw.net

Կայքէջ՝ www.efecw.net